<i>Լաբորատորիաներ, կաբինետներ և դահլիճներ</i>	<i>Տարածքը (քմ)</i>	<i>Վերանորոգման կարիքը</i>	<i>Առկա գույքը, լաբորատոր սարքավորումները, պարագաները (թվարկել հիմնականը)</i>	<i>Ուսումնական նյութական, ուսումնադիդակտիկ նյութերը</i>	<i>Լրացուցիչ, գույքի, սարքավորումների, պարագաների նյութերի կարիքը</i>
Ֆիզիկայի լաբորատորիա, կաբինետ	15,7 քմ		փորձարարական սարքեր (օերմային երևույթներ, մթնոլորտ. ճնշման սարքեր, դինամիկա, էլեկտրամագնիսականություն, օպտիկա):	աստղագիտական պաստառներ, ֆիզիկայի պաստառներ	մաթեմ. և գապ. ճոճանակ, չափիչ սարքեր, փորձանոթներ, մարտկոցներ, մագնիսներ, վիրտուալ ֆիզիկայի լաբորատոր սկավառակներ
Քիմիայի լաբորատորիա, կաբինետ	15 քմ		Մանրադիտակ, բյուրեղացանցեր, քիմիական նյութեր, փորձանոթներ, շտատիվներ	ցուցապաստառներ, մոդելներ, քիմիական նյութեր	ալկալիներ, թթուներ, բարիումի աղեր, կարմիր և դեղին արյան աղեր, ինդիկատորներ, շտատիվներ, փորձանոթներ, արծաթի նիտրատ
Կենսաբանության լաբորատորիա, կաբինետ	--			ցուցապաստառներ, մոդելներ	կենսաբանության ցուցապաստառներ (բջջի կառուցվածք, կենսաբազմազանություն)
Աշխարհագրության լաբորատորիա, կաբինետ	--			քարտեզներ, պլակատներ, գլոբուս	
Պատմության կաբինետ	--			քարտեզներ, պլակատներ	
Ռազմագիտության կաբինետ	25,3 քմ		աթոռներ, սեղաններ	պաստառներ, տեսաերիզ, տիր-հրացան, հակագազեր, կալաշնիկով ինքնաձիք	նոր հակագազեր, դիդակտիկ նյութեր, ուսումնական նոնակներ, քիմիական հագուստ
Համակարգչային լաբորատորիա, կաբինետ	33 քմ		տպիչ, անհատական համակարգիչներ, պրոյեկտոր, նեթբուքեր, հեռուստացույց, նոթբուք, ինտերնետային սարք ինտերակտիվ գրատախտակ, պլանշետներ	առարկայական խտասկավառակներ	Հոսանքի անհատական սնուցման սարքեր
Օտար լեզուների լինգվաֆոնային կաբինետ	--	--	--	--	--
Արհեստանոց	--	--	--	--	--
Միջոցառումների դահլիճ	102,5 քմ		ուսուցչական սեղան, ամբիոն, մեծ սեղան, փափուկ աթոռներ, դաշնամուր	--	--
Մարզադահլիճ	--	--	--	--	--
Այլ					

Ուսումնական լաբորատորիաները, համակարգչային և ռազմական կաբինետները ծառայում են իրենց նպատակին՝ ուսումնական գործընթացն արդյունավետ դարձնելու համար: Լաբորատորիաները և կաբինետները հաճախակի հազեցվում են ժամանակակից գույքով ու սարքերով:

Դպրոցը չունի մարզադահլիճ և արհեստանոց, որը մարզային ղեկավարության ուշադրության կենտրոնում է:

3.4. Հաստատության ներքին արդյունավետության ցուցանիշները

Հաստատության ներքին արդյունավետությունը բնորոշվում է իր մարդկային, նյութական ու ֆինանսական ռեսուրսների օգտագործման արդյունավետությամբ:

Հաստատության ներքին արդյունավետությունը «իր գործունեությունը պատշաճ մակարդակով իրականացնելու և իր նպատակներն ու խնդիրները իրագործելու հաստատության կարողությունն է՝ առանց ռեսուրսների, ժամանակի, ֆինանսական միջոցների և ջանքերի վատման»: Այլ կերպ ասած՝ կրթական ծառայությունների մատուցումը արդյունավետ է, եթե այն տրամադրողները լավագույն կերպով են օգտագործում առկա ռեսուրսները: Բարձրացնել հաստատության ներքին արդյունավետությունը, ըստ էության, նշանակում է՝ «բարելավել ուսումնական գործընթացի արդյունքներն առանց լրացուցիչ ֆինանսական միջոցների և ռեսուրսների կամ կրճատել ծախսերը առանց ուսումնական գործընթացի վրա բացասական ազդեցություն գործելու»:

Աղյուսակ 26. Ուսումնական հաստատության ներքին արդյունավետության հիմնական ցուցանիշները՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Ցուցանիշներ	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Մովորող/ուսուցիչ հարաբերությունը	15,3	14,5	14,1	նվազում
Մովորող/ սպասարկող անձնակազմ հարաբերությունը	54,4	58,3	45,3	աճ - նվազում,
Դասարանների միջին խտությունը	25,7	24,5	23,8	նվազում
Մեկ սովորողի հաշվով հաստատության տարեկան նախահաշիվը	192,3	189,1	203,3	նվազում-աճ
Սպասարկող անձնակազմի միջին աշխատավարձը	90,1	82,3	78,2	նվազում
Ուսուցիչների միջին աշխատավարձը	121,3	121,0	121,0	նվազում
Վարչական աշխատողների միջին աշխատավարձը	182,5	182,5	182,5	նույնը

Աղյուսակ 27. Տվյալներ հաստատության բյուջետային միջոցների վերաբերյալ

Ցուցանիշ	2020թ.	2021թ.	2022թ.
Հաստատության տարեկան նախահաշվում արտաբյուջետային միջոցների չափը (%)	4,90%	13,20%	19,36%
Ծնողների կողմից դրամական ներդրումների տարեկան չափը	0 դրամ	0 դրամ	0 դրամ
Հովանավորչական և դրամաշնորհային միջոցների տարեկան չափը(%)	1,08%	1,19%	1,26%
Աշխատավարձերի վճարման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը հաստատության տարեկան բյուջեում(%)	93,20%	96,30%	91,50%
Կոմունալ վճարների գծով հաստատության տարեկան ծախսերի չափը(%)	2,84%	2,94%	1,32%
Նոր գույքի, այդթվում՝ սարքավորումների ձեռքբերման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը (%)	0,00%	0,00%	0,03%

Դպրոցում գործում է նախակրթարան: Դպրոցում իրականացվում է համընդհանուր ներառական կրթություն: Ներքին արդյունավետության հիմնական ցուցանիշները և՛ աճել են, և՛ նվազել: Ուսումնական հաստատության միջոցները ծախսվում է նպատակային:

Մաս. 4.

Ներառական կրթության և հավասարության ապահովում

«Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև. խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

Ներառական կրթության հիմքում ընկած է մարդկանց հավասար իրավունքների և կրթություն ստանալու մարդու հիմնարար իրավունքը:

«Յուրաքանչյուր քաղաքացի ունի կրթության իրավունք: Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Յուրաքանչյուր քաղաքացի ունի պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք:»

«Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Կրթությունը, առնվազն տարրական և հանրակրթական փուլերում, պետք է լինի անվճար: Տարրական կրթությունը պետք է լինի պարտադիր: Տեխնիկական և մասնագիտական կրթությունը պետք է լինի հանրամատչելի, իսկ բարձրագույն կրթությունը, ընդունակություններին համապատասխան, հավասարապես մատչելի բոլորի համար:

Կրթությունը պետք է նպատակաուղղված լինի անձի լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը: Այն պետք է նպաստի բոլոր ազգերի, ռասայական և կրոնական խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուրժողականությանն ու բարեկամությանը, է՛լ ավելի նպաստի ՄԱԿ-ի խաղաղապահական գործունեությանը: Ծնողներն իրենց երեխաների համար կրթության տեսակն ընտրելու առաջնային իրավունք ունեն»:

«Երեխայի կրթությունը պետք է ուղղված լինի.

ա) երեխայի անհատականության, տաղանդի և մտավոր ու ֆիզիկական ունակությունների զարգացմանը՝ դրանց լրիվ ծավալով

բ) մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի դաստիարակմանը

գ) երեխայի ծնողների, նրա մշակութային ինքնատիպության, լեզվի և արժեքների, երեխայի բնակության երկրի ազգային արժեքների, նրա ծագման երկրի և իր սեփական քաղաքակրթությունից տարբեր քաղաքակրթությունների հանդեպ հարգանքի դաստիարակմանը

դ) երեխային ազատ հասարակության մեջ, փոխըմբռնման, խաղաղության, հանդուրժողականության, տղամարդու և կնոջ իրավահավասարության և բոլոր ժողովուրդների, էթնիկական, ազգային և կրոնական խմբերի, ինչպես նաև բնիկ ազգաբնակչությանը պատկանող անձանց միջև բարեկամության ոգով պատասխանատու կյանքով ապրելուն նախապատրաստելը,

ե) շրջապատող բնության նկատմամբ հարգանքի դաստիարակմանը»:

«Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ

այլ

հանգամանքներից:

Պետությունը կրթության իրավունքն ապահովում է կրթության համակարգի բնական գործառնությամբ և կրթություն ստանալու համար սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծմամբ»:

«Ներառական կրթությունը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրանց համատեղ ուսուցումն է հանրակրթական մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ»:

Ներառական կրթությունը նպաստավոր է թե՛ կրթության նպատակային կազմակերպման, թե՛ ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության և թե՛ սովորողների իրավունքների հարգման տեսանկյունից: Մա այն դեպքն է, երբ շահում է երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը:

Ներառական կրթության պարագայում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան դառնում է իրավահավասար բոլոր երեխաների հետ: Նրա կրթության և հասարակական կյանքին մասնակցությունը որոշվում է իր ցանկությամբ և նրան տրվում է հնարավորություն բացահայտվելու՝ իր բոլոր ունակություններով, և դրսևորվելու՝ իր համար հաղթահարելի ձևով: Ներառական կրթության հիմքում ընկած է այն մոտեցումը, որ, երեխան ունի ոչ թե «ֆիզիկական ու մտավոր արատներ», այլ տարբեր պատճառներով կրթությանը լիարժեք մասնակցելու «դժվարություններ»: Դա կարող է լինել, ֆիզիկական միջավայրը, տեխնիկական սարքերը, մասնագետի աշխատանքը, ուսուցման մեթոդները, ուսուցողական հարմարեցված նյութերը և այլն:

Ներառական կրթության պարագայում կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող երեխայի ընտանիքը դադարում է խուսափել իր երեխայի խնամքից կամ իր երեխայի հետ միջավայրի շփումից, քանի որ նույն միջավայրը հանդուրժողականությամբ է վերաբերում իր երեխային՝ ընդունելով վերջինիս հավասար լինելու փաստը: Ընտանիքի հետ տարվող մասնագիտացված աջակցության ծառայությունները և միջավայրի վերաբերմունքը օգնում են ծնողին ավելի օգտակար լինել իր երեխային, դուրս գալ անելանելիության վիճակից ու ամոթի բարդությանից և օգնել իր երեխային հաղթահարելու անհատական ուսուցման պլանը:

Ներառական կրթության պարագայում, պետությունը աստիճանաբար իրականացնում է սոցիալական հավասարության ապահովման խնդրում իր դերակատարումը՝ նվազեցնում է հասարակության շերտավորումը ու նպաստում նրա հոգեբանական առողջացմանը, հասնում է բյուջետային միջոցների արդյունավետ ու նպատակային բաշխմանը, քանի որ հատկացումները կատարվում են ավելի մեծ թվով երեխաների կրթությունը կազմակերպելու համար:

Երեխաների շրջանում իրավահավասարության ապահովումը հանգեցնում է ստեղծագործական հնարավորություններով ու ինքնուրույն գործելու պատրաստ մարդու ձևավորմանը:

Ի վերջո ներառական կրթությունը նպաստում է երկրում կրթության կազմակերպման և իրականացման մեխանիզմների արդիականացմանը՝ համաշխարհային զարգացման ժամանակակից միտումներին և մարտահրավերներին համահունչ:

Այսպիսով, ներառական կրթությունը, ենթադրում է հաստատություններում այնպիսի կրթական միջավայրի և պայմանների ստեղծում, որոնցում բոլոր երեխաները, անկախ իրենց առանձնահատուկ կրթական կարիքներից, ունեն կրթություն ստանալու հավասար հնարավորություններ: Նման միջավայրը պետք է լինի երեխաներին ներառող, կրթություն ստանալու համար արդյունավետ, երեխաների նկատմամբ բարյացկամ, երեխաների առողջության համար ապահով ու անվտանգ: Ներառումը ենթադրում է կրթության առավել լայն տեսլական, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին:

Ուսումնական հաստատությունում բոլոր երեխաների մոտ պետք է ձևավորվեն այնպիսի հմտություններ, վերաբերմունք և արժեհամակարգ, ինչը նրանց թույլ կտա հաստատությունն ավարտելուց հետո, չափահաս կյանքում իրենց լիովին դրսևորել և ինքնաիրացվել:

Հավասարության սկզբունքը իր մեջ ներառում է նաև տարբեր սեռերի, ազգային փոքրամասնությունների, սոցիալական տարբեր կարգավիճակի ընտանիքների երեխաների հավասարությունը:

Հաստատությունում ներառական կրթության և սովորողների միջև հավասարության ապահովման ինքնագնահատումն ուղղված է բացահայտելու, թե արդյոք հաստատությունն ապահովում է ակնկալվող հետևյալ արդյունքները՝

- հաստատություն ընդունվելու և հաստատությունում սովորելու համար ստեղծված են հավասար պայմաններ բոլոր երեխաների համար՝ նրանց կարիքներից, կարողություններից և սոցիալական խոցելիության աստիճանից անկախ.
- հաստատությունն ապահովում է բոլոր սովորողների հավասար մասնակցությունը ուսումնառության գործընթացին՝ նրանց կարիքներից, կարողություններից և սոցիալական խոցելիության աստիճանից անկախ.
- հաստատությունն ապահովում է բոլոր սովորողների համար կրթության արդյունքներին հասնելու և առաջադիմության ցանկալի մակարդակը՝ նրանց կարիքներից, կարողություններից և սոցիալական խոցելիության աստիճանից անկախ:

Չափանիշ	Այո	Ոչ	Մեկնաբանություն
<p>Ներառական կրթության զարգացումը որպես նպատակ ամրագրված է ուսումնական հաստատության զարգացման ծրագրում</p>	Այո		<p>Ներառական կրթությունը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրանց համատեղ ուսուցումն է հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ: Ներառական կրթության քաղաքականության հիմքում երեխայակենտրոն մանկավարժությունն է: Ներառական կրթությունը նպաստավոր է թե՛ կրթության նպատակային կազմակերպման, թե՛ ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության և թե՛ սովորողների իրավունքների հարգման տեսանկյունից: Սա այն դեպքն է, երբ շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը:</p>
<p>Ուսումնական հաստատության զարգացման ծրագրում պլանավորված են ներառական կրթության ապահովմանն ուղղված համապատասխան միջոցառումներ, այդ թվում՝ ուսուցիչների վերապատրաստումներ</p>	Այո		<p>Կարևորել ներառական կրթությունը: Արդիականացնել աշխատակազմի գիտելիքներն ու հմտությունները ներառական կրթության ոլորտում՝ ապահովելով մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին: Ապահովել բավարար ռեսուրսներ՝ աջակցելու ԿԱՊԿՈՒ երեխաների սովորելուն և ուսումնական միջավայրը հարմարեցնելու նրանց կարիքներին: Մշակել և իրականացնել միջոցառումների պլան՝ ապահովելով դասարանական և արտադասարանական աշխատանքներին ԿԱՊԿՈՒ երեխաների հավասար մասնակցությունը: Ապահովել ուսումնական ծրագրերի, դասի պլանի և ուսուցման գործընթացի հարմարեցվածությունը ԿԱՊԿՈՒ երեխաների կարիքներին և մշտապես խրախուսել: Մշտապես հետևել ԿԱՊԿՈՒ երեխաների հավասարապես մասնակցությանը դպրոցի և դասի բոլոր գործընթացներին՝ ըստ իրենց կարողությունների առավելագույն աստիճանի: Ապահովել սովորողների գիտակցման անհրաժեշտությունը ԿԱՊԿՈՒ իրենց ընկերների նկատմամբ գոյություն ունեցող կարծրատիպերի վերացման ուղղությամբ: ԿԱՊԿՈՒ երեխաների տեսանկյունից ստեղծել հավասար պայմաններ և նրանց կարիքին համապատասխան որակյալ կրթության հնարավորություն: Կազմել ԱՈՒՊ ներառական կրթությանն աջակցող մասնագետների՝ սովորողի հետ աշխատող ուսուցիչների, հատուկ և սոցիալական մանկավարժների, հոգեբանի կողմից:</p>
<p>Ուսումնական հաստատության տնօրենն ունի ներառական կրթության գործընթացի համակարգման իսպորտություններով տեղակալ կամ այն պատվիրակված է տեղակալներից որևէ մեկին</p>	Այո		<p>Ուսումնական հաստատության ներառական կրթության համակարգման գործընթացը կազմակերպվում է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության աշխատակիցների կողմից (բազմամասնագիտական թիմ), ովքեր կազմակերպում են բոլոր աշխատանքներն ըստ իրենց պարտականությունների:</p>
<p>Ուսումնական հաստատության վեբ կայքում գործում է ներառական կրթության բաժին՝ ընտանիքի և համայնքի հետ հետադարձ կապի հնարավորությամբ</p>		Ոչ	

<p>Ուսումնական հաստատությունն իրականացնում է երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված և նման այլ ուսումնական ծրագրեր:</p>	<p>Այո</p>	<p>Ուսումնական հաստատությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (ԿԱՊԿՈՒ) ունեցող երեխաների կրթության իրավունքի իրացման գործընթացը խարսխվում է կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովման սկզբունքների վրա:</p> <p>2021-2022 ուստարվա ընթացքում անցակցվել են անհատական և խմբային գրույց-քննարկումներ «Մասնագիտության կողմնորոշում», «Ի՞նչ է բուլլինգը», «Ինչպե՞ս կառուցել գրագետ բանավեճ» և «Ի՞նչ է գայրույթը. գայրույթի կառավարում» թեմաներով:</p> <p>Ներառվել են 1-9-րդ դասարանների բոլոր աշակերտները:</p> <p>Կազմակերպվել և անցկացվել է ծնողական ժողով ԿԱՊԿ ունեցող սովորողների ծնողների հետ՝ ԱՌԻՊ-ների մեջ դրված նպատակադրումների, սովորողների կրթական կարիքից ելնելով գրանցած դինամիկայի և հետընթացի վերաբերյալ:</p> <p>2021թ. նոյեմբերի 02-ին մանկավարժական խորհրդի N4 նիստի ժամանակ ներկայացվել է զեկույց՝ «ԿԱՊԿ ունեցող սովորողների ԱՌԻՊ-ների լրացման ընթացակարգը» վերնագրով (Հաղորդող՝ Ն.Ավետիսյան):</p> <p>2022թ. փետրվարի 21-ի մանկավարժական խորհրդի N7 նիստի ժամանակ ներկայացվել է զեկույց՝ «Սովորողի դպրոցում տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունից ազատելու և ներառական կրթության ծրագրից դուրս գրելու մասին» վերնագրով: (Հաղորդող՝ Հ. Մուրադյան):</p> <p>2022թ ապրիլի 22-ին հաստատության անկավարժահոգեբանական աջակցության ծառայություն տրամադրող խումբը «Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան որակյալ կրթության կայացմանը» ծրագրի շրջանակներում կազմակերպել և անցկացվել է «Բոլորս տարբեր ենք, բոլորս՝ հավասար» խորագիրը կրող միջոցառումը:</p> <p>2022թ. ապրիլի 29-ին էլ. տարբերակով կազմվել և «Դպրոցական ծնողխորհուրդների անդամների ազգային ասոցիացիա» ՀԿ-ին է ուղարկվել «Ներառման ինդեքս» միջազգային ուղեցույցի վրա հիմնված դպրոցի զարգացման պլանը:</p>
<p>Վերջին 5 տարում տնօրինությունը մասնակցել է ներառական հաստատությունների կառավարման թեմայով վերապրաստման</p>	<p>Այո</p>	<p>Ուսումնական հաստատության տնօրինությունը (տնօրեն, ՄԿԱՏ) մասնակցել է ներառական հաստատությունների կառավարման թեմայով վերապատրաստման Երևանի Բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնում: Սեմինարի արդյունավետությունը կայանում է նրանում, որ դպրոցի ուսուցիչները, սովորողները և ծնողները ունեն դրական դիրքորոշում ներառական կրթության նկատմամբ:</p>
<p>Ուսումնական հաստատությունն ունի ներառական կրթության թեմաներով վերապատրաստված և վերապատրաստող ուսուցիչներ: Վերջին 5 տարում ներառական կրթության թեմաներով վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը</p>	<p>Այո</p>	<p>Ուսումնական հաստատությունն ունի ներառական կրթության թեմաներով վերապատրաստված և վերապատրաստվող ուսուցիչներ:</p> <p>Ցուցաբերվել է մասնակցություն ՀՀ Շիրակի ՏՄԱԿ-ի աշխատակազմի կողմից կազմակերպված «Նոր ԱՌԻՊ-ների լրացման ընթացակարգը, փոփոխությունները» թեմայով սեմինարին:</p> <p>Ցուցաբերվել է մասնակցություն մարզային աշխատաժողովին՝ ՀՀ պետական հանրակրթական դպրոցներում կրթության կազմակերպման գործընթացի ներառականությունը գնահատող հետազոտության արդյունքների ներկայացմանը:</p> <p>Ցուցաբերվել է մասնակցություն ՀՄԿ-ի կողմից կազմակերպված «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման կարողությունների զարգացում» խորագրով վերապատրաստմանը:</p> <p>Ցուցաբերվել է մասնակցություն «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի կողմից կազմակերպված «Խոսքի զարգացման խանգարում» թեմայով սեմինարին:</p>

Ցուցաբերվել է մասնակցություն «Ինթրա» հոգեբանական ակումբի կողմից կազմակերպված «Կանխարգելենք բռնությունը դպրոցներում ի նպաստ առողջ հասարակության» թեմայով սեմինարին:

2021թ. նոյեմբերի 6-ին և 7-ին ցուցաբերվել է մասնակցություն «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի կողմից կազմակերպված և ացկացված «Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան որակյալ կրթության կայացմանը» ծրագրի շրջանակում կազմակերպված «Ուսումնառության համընդհանուր ձևավորում, համատեղ դասավանդում և անհատական ուսուցման պլան» թեմայով 2-օրյա վերապատրաստմանը:

2021թ. դեկտեմբերի 11-12-ը ցուցաբերվել է մասնակցություն «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի «Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան որակյալ կրթության կայացմանը» ծրագրի շրջանակում կազմակերպված «Ներառական դասավանդման մեթոդները» թեմայով 2-օրյա վերապատրաստմանը:

2022թ. հունվարի 19-ից zoom հարթակում ցուցաբերվել է մասնակցություն «Ազաթ» հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ-ի կողմից կազմակերպված «Դեպի անկախ կյանք, Հայաստանում ներառական համայնքների ստեղծման համար հնարավորությունների և գործընկերությունների խթանում» թեմայով 5-օրյա վերապատրաստմանը:

2022թ. հունվարի 26-ին ցուցաբերվել է մասնակցություն «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի կողմից կազմակերպված քննարկմանը. «Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան որակյալ կրթության կայացմանը» ծրագրի շրջանակներում մշակել դպրոցի զարգացմանը նպատաուղղված գործողությունների պլան և շարունակական դարձնել համագործակցությունը:

2022թ. փետրվարի 11-12-ը ցուցաբերվել է մասնակցություն «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի «Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան որակյալ կրթության կայացմանը» ծրագրի շրջանակում կազմակերպված «Աուտիզմի համախտանիշ, դաունի սինդրոմ, վարքային խանգարումներ» թեմայով 2-օրյա վերապատրաստմանը:

2022թ. փետրվարի 16-ին ցուցաբերվել է մասնակցություն «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի և «Դպրոցական ծնողխորհուրդների անդամների ազգային ասոցիացիա» ՀԿ-ի կողմից կազմակերպված «Ներառման ինդեքս» միջազգային ուղեցույցի վրա հիմնված դպրոցի զարգացման պլանի քննարկմանը:

2022թ. մարտի 5-ին «Փոքրիկ իշխան» կենտրոնում ցուցաբերվել է մասնակցություն «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի կողմից կազմակերպված «Աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ աշխատանքային մեթոդների կիրառում» թեմայով սեմինարին:

2022թ. մարտի 25-26 ցուցաբերվել է մասնակցություն «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի «Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան որակյալ կրթության կայացմանը» ծրագրի շրջանակում կազմակերպված «Մանր մտորիկայի զարգացում, տառուսուցում, թիվուսուցում» թեմայով 2-օրյա վերապատրաստմանը:

2022թ. մարտի 29-31 ցուցաբերվել է մասնակցություն ՀՄԿ-ի կողմից կազմակերպված «Ուսուցչի օգնականի աշխատանքային պարտականությունները և գործառնությունները» թեմայով 3-օրյա վերապատրաստմանը:

2022թ. ապրիլի 12-ին ցուցաբերվել է մասնակցություն «Ինթրա» հոգեբանական ակումբի կողմից կազմակերպված «Դարձրո՛ւ աշխատավայրդ ապահով միջավայր՝ պաշտպանելով խտրականությունից զերծ լինելու քո իրավունքը» թեմայով սեմինարին:

2022թ. ապրիլի 22-ին «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի և «Դպրոցական ծնողխորհուրդների անդամների ազգային ասոցիացիա» ՀԿ-ի կողմից կազմակերպված «Ի՞նչ է զայրույթը. զայրույթի կառավարում» գործնական սեմինարին:

<p>Ուսումնական հաստատությունում ամենուրեք (դասասենյակներ, դահլիճներ, գրադարաններ և այլն) ապահովված է տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձնաց համար ֆիզիկական մատչելիություն</p>	<p>Այո</p>	<p>Ուսումնական հաստատությունում սովորող աշակերտների մեջ չկան ֆիզիկական սահմանափակ կարողություններով աշակերտներ, սակայն ուսումնական հաստատությունում ֆիզիկական մատչելիության ապահովման գործընթացը ավարտված է (տեղադրված է թեքահարթակ) հետագայում ապահովելու մատչելի պայմաններ տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձանց համար:</p>
<p>Հաստատությունն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հոգեբանամանկավարժական աջակցության թիմ (հատուկ մանկավարժ, սոցիալական աշխատող, հոգեբան, ուսուցչի օգնական և այլն)</p>	<p>Այո</p>	<p>Ուսումնական հաստատությունում 2014 թվականի սեպտեմբերի 1-ից գործում է ներառական կրթությունը: Ուսումնական տարվա սկզբից մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության աշխատակիցները հատուկ մանկավարժ, սոցիալական մանկավարժ, լոգո-պեդ, հոգեբաններ, ուսուցչի օգնականներ (դաստիարակներ), սկսել են իրենց աշխատանքը ԿԱՊԿՈՒ սովորողների հետ, յուրաքանչյուր մասնագետ կազմակերպում է իր աշխատանքը ըստ բժշկահոգեբանամանկավարժական գնահատման հանձնաժողովի տրված եզրակացությունների և ըստ իր աշխատանքային պարտականությունների:</p> <p>Հատուկ մանկավարժը</p> <ul style="list-style-type: none"> • կազմակերպում և իրականացնում է կրթական հատուկ կարիքներին համապատասխան մանկավարժական աշխատանքներ և ծառայություններ ԿԱՊԿՈՒ սովորողների հետ: • բացահայտում, դիտարկում, հետազոտում և գնահատում է սովորողների ուսումնառության ընթացքում ի հայտ եկած մտավոր և ֆիզիկական խնդիրները, կրթական կարիքները: • անցկացնում է դասալսումներ՝ նպատակ ունենալով պարզելու սովորողների ուսումնական գործունեության և նրանց հետ տարվող աշխատանքների արդյունավետությունը: • հետազոտման արդյունքների հիման վրա անցկացնում է խմբային և անհատական պարապունքներ, ձևավորում է ուսումնական նյութը յուրացնելու համար անհրաժեշտ կարողություններ և հմտություններ: • մասնակցում է սովորողների անհատական ուսումնական պլանների (ԱՌԲՊ) մշակմանը՝ հաշվի առնելով նրանց զարգացման առանձնահատկությունները, կրթական կարիքները: • կատարած աշխատանքների վերաբերյալ ներկայացնում է կիսամյակային, տարեկան հաշվետվություն: <p>Սոց. մանկավարժը</p> <ul style="list-style-type: none"> • ուսումնական հաստատությունում աշխատանք է տանում սովորողների ուսումնական գործընթացի և սոցիալականացման վրա ազդող անձնային խնդիրների բացահայտման հաղթահարման ուղղությամբ՝ նրանց սոցիալական օգնություն ցուցաբերելու նպատակով: • ուսումնասիրում է սովորողների սոցիալական հարմարման, ինտեգրման և շրջապատի հետ հաղորդակցության դժվարությունները և իրականացնում դրանց կանխարգելմանն ու հաղթահարմանը նպաստող աշխատանքներ: • մասնակցում է ԿԱՊԿՈՒ սովորողների ԱՌԲՊ-ների մշակմանը և դրանց իրագործման աշխատանքներին • համագործակցելով բազմամասնագիտական թիմի հետ՝ ուսումնասիրում է սովորողների կյանքի պայմանները, ընտանիքի առանձնահատկությունները, ընտանեկան փոխհարաբերությունների ազդեցությունը սովորողի վրա, նրանց սոցիալական միջավայրը, շփումները, սոցիալական միջավայրում հարմարման մակարդակը, դուրս է բերում կարիքները և կազմում է սոցիալական կարիքների գնա-հատման թերթիկները • անցկացնում է անհատական, խմբային գրույց սովորողների, նրանց ծնողների հետ՝ սովորողների մոտ առկա սոցիալական խնդիրների լուծման նպատակով • կատարած աշխատանքների մասին ներկայացնում է կիսամյակային, տարեկան հաշվետվություն:

		<p>Հոգեբանը</p> <ul style="list-style-type: none"> աջակցում է ուսումնական հաստատությունում բարենպաստ հոգեբանական մթնոլորտի և սովորողների զարգացման համար լիարժեք պայմանների ստեղծմանը աջակցում է ԿԱՊԿՈՒ սովորողների լիիրավ կրթություն ստանալու գործընթացին, մասնակցում է վերջիններիս ԱՌԻՊ-ների մշակման գործընթացին դասալսումների միջոցով հետազոտում և հայտնաբերում է աշակերտի անձի կայացումը դժվարացնող գործոնները, վերջիններս վերացնելու նպատակով զրուցում ուսուցիչների հետ իրականացրած աշխատանքների մասին ներկայացնում է կիսամյակային, տարեկան հաշվետվություն: <p>Լոգոպեդը</p> <ul style="list-style-type: none"> հետազոտում և գնահատում է սովորողների բանավոր և գրավոր խոսքի զարգացումը բացահայտում է խոսքի թերությունների բնույթը և արտահայտման աստիճանը, պարապմունքների համար խմբերը կոմպլեկտավորելիս հաշվի է առնում սովորողների խոսքի խանգարման բնույթը մասնակցում է սովորողների ԱՌԻՊ-ների մշակմանը հաշվի առնելով խոսքի խանգարման բնույթը կատարած աշխատանքների մասին ներկայացնում է կիսամյակային, տարեկան հաշվետվություն <p>Դաստիարակը ՈՒՍՈՒՑԶԻ ՕԳՆԱԿԱՆ</p> <ul style="list-style-type: none"> անցկացնում է անհատական, խմբային աշխատանք ԿԱՊԿՈՒ սովորողների հետ, ձևավորում է ուսումնական նյութը յուրացնելու համար անհրաժեշտ կարողություններ և հմտություններ անցկացնում է դասալսումներ՝ նպատակ ունենալով պարզելու սովորողների ուսումնական գործունեության և նրանց հետ տարվող աշխատանքների արդյունավետություն կատարած աշխատանքների մասին ներկայացնում է կիսամյակային, տարեկան հաշվետվություն:
<p>ԿԱՊԿՈՒ սովորողներն ապահովված են դասագրքերով, գրենական պիտույքներով, հարմարանքներով, այլ պարագաներով:</p>	<p>Այո</p>	<p>ԿԱՊԿՈՒ սովորողները ապահովված են դասագրքերով և համապատասխան գրենական պիտույքներով: Ուսումնական հաստատությունում ֆունկցիաների տարատեսակ սահմանափակումներ ունեցող սովորողներ չկան, այդ իսկ պատճառով բոլորը սովորում են ընդհանուր առարկայական չափորոշիչներին համապատասխան: Անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր մասնագետ աշխատում է ԿԱՊԿՈՒ սովորողի հետ հատուկ մեթոդական նյութերով և գրքերով:</p>
<p>Հաստատությունում առկա են ուսումնամեթոդական նութեր և սարքավորումներ լսողության և տեսողության գործառույթի բացակայություն կամ սահմանափակում ունեցող սովորողների համար:</p>	<p>Ոչ</p>	<p>Ուսումնական հաստատությունում սովորողների մեջ չկան ֆիզիկական սահմանափակ կարողություններով աշակերտներ, այդ իսկ պատճառով չունենք համապատասխան սարքավորումներ: Անհրաժեշտության դեպքում ուսումնական հաստատությունը ձեռք կբերի ուսուցման պրոցեսը ապահովվող նյութերը:</p>
<p>Դասասենյակների դասավորվածությունն այնպիսին է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները մեկուսացված չեն:</p>	<p>Այո</p>	<p>Ուսումնական հաստատության դասասենյակները դասավորված են այնպես, որ ԿԱՊԿՈՒ սովորողները մեկուսացված չեն: Դպրոցի բոլոր դասասենյակները հարմարավետ են բոլոր աշակերտների, այդ թվում նաև ԿԱՊԿՈՒ սովորողների ուսումնադաստիարակչական պրոցեսը կազմակերպելու և հարմարավետ դարձնելու համար:</p>
<p>Ուսումնական հաստատությունն ունի ռեսուրս-սենյակ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար</p>	<p>Այո</p>	<p>Ուսումնական հաստատությունն ունի ռեսուրս-սենյակ ԿԱՊԿՈՒ սովորողների համար: Սենյակը բարվոք վիճակում է, ունի 42 քմ տարածք, սենյակում կան գրապահարաններ, որտեղ դասավորված են համապատասխան գրքեր, մեթոդական նյութեր, գրենական պիտույքներ: Յուրաքանչյուր ԿԱՊԿՈՒ սովորող ունի իր թղթապահանակը, որտեղ դրված են իր կողմից կատարված բոլոր աշխատանքները:</p>
<p>Ուսումնական հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող ֆիզիկական (թեքահարթակ, հենակ և այլն) խոչընդոտները</p>	<p>Այո</p>	<p>Ուսումնական հաստատությունում սովորող աշակերտների մեջ չկան ֆիզիկական սահմանափակ կարողություններով աշակերտներ, սակայն ուսումնական հաստատությունում ֆիզիկական մատչելիությունն ապահովված է (տեղադրված է թեքահարթակ):</p>
<p>Ուսումնական հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող սոցիալական (վերաբերմունք, կարծրատիպ) խոչընդոտները</p>	<p>Այո</p>	<p>Ուսումնական հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող սոցիալական (վերաբերմունք, կարծրատիպ) խոչընդոտները:</p>

Անհատական ուսումնական պլանները (ԱՌԳՊ) մշակվում են համաձայն հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական ծրագրերի հաշվի առնելով սովորողների կարիքները, ընդունակությունները, նարավորությունները, ձեռքբերումները և առաջընթացը	Այո	Անհատական ուսումնական պլանները (ԱՌԳՊ) մշակվում են՝ համաձայն հանրակրթական պետական չափորոշիչների և առարկայական ծրագրերի: Համապատասխան մասնագետները կատարում են ԿԱՊԿՈՒ սովորողների նախնական գնահատում, որից հետո մշակվում են հետագա կատարվելիք գործողությունները և անցկացվում ԱՌԳՊ-ների համապատասխան բաժնում՝ հաշվի առնելով ԿԱՊԿՈՒ սովորողների կարիքները, ընդունակությունները, հնարավորությունները և առաջընթացը: Այնուհետև յուրաքանչյուր մասնագետ բուն գործողությունը ծավալում է ըստ ԱՌԳՊ-ի գրառման: Տարվա վերջում կատարվում է ԱՌԳՊ-ների ամփոփում և գրվում եզրակացություն:
Ուսուցիչների թիվը, ովքեր ունեն դրական դիրքորոշում ներառական կրթության նկատմամբ	Այո	Դպրոցում՝ բոլորն ունեն դրական դիրքորոշում ներառական կրթության նկատմամբ:
Ուսուցիչները գիտակցում են ներառական կրթության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունը և ձեռնարկում են համապատասխան քայլեր	Այո	Ուսուցիչները գիտակցում են ներառական կրթության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունը և ձեռնարկում են համապատասխան քայլեր (անհատական և խմբային զրույցներ, զեկուցումներ, խաղեր...)
Ուսուցիչներն ունեն հավասար վերաբերմունք բոլոր սովորողների նկատմամբ, անկախ նրանց միջև եղած տարբերություններից և նրանց առանձնահատուկ կարիքներից	Այո	Ուսուցիչներն ունեն հավասար վերաբերմունք բոլոր սովորողների նկատմամբ, անկախ նրանց միջև եղած տարբերություններից և նրանց առանձնահատուկ կարիքներից:
Ուսուցիչները կարողանում են հայտնաբերել կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ, երևույթ դասարանում, դպրոցում, ուսումնական նյութերում, և նույնիսկ սեփական վարքագծում	Այո	Ուսուցիչները կարողանում են հայտնաբերել կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ, երևույթ դասարանում, դպրոցում, ուսումնական նյութերում, և նույնիսկ սեփական վարքագծում:
Մոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների համար հաստատության իրականացրած սոցիալական աջակցության ծրագրերը	Այո	Ուսումնական հաստատությունն իրականացնում է բազմատեսակ սոցիալական աջակցության ծրագրեր: Մոցիալապես անապահով ընտանիքների սովորողներին տրամադրվել է անվճար սնունդ, հագուստ, համապատասխան գրենական պիտույքներ: Այդ ծրագրերին մասնակցել են ուսումնական հաստատության սովորողների մեծամասնությունը, մանկավարժական հանրային անդամները:
ԿԱՊԿՈՒ սովորողների նկատմամբ հանդուրժողականության ձևավորմանն ուղղված սովորողների նախաձեռնությունները:	Այո	Ուսումնական հաստատությունում սովորողների կողմից իրականացվել են հանդուրժողականությանը նվիրված տարբեր նախաձեռնություններ՝ միմյանց նկատմամբ օգնություն ցուցաբերելու պատրաստակամություն, համագործակցություն, ապրումակցում, մանր մոտորիկայի խնդիրներ ունեցող աշակերտների նկատմամբ աջակցություն: Ուսումնական հաստատության ձեռքբերումներից է այն, որ վերացել է ԿԱՊԿՈՒ սովորողների նկատմամբ կարծրատիպային վերաբերմունքը. Աշակերտներն ընդունում են ԿԱՊԿՈՒ սովորողներին այնպես, ինչպես որ կան, անկախ նրանց առանձնահատկություններից և կարիքներից: Դպրոցում տիրում է միմյանց նկատմամբ հանդուրժողականության մթնոլորտ:

Ուսումնական հաստատության ձեռքբերումներից են

1. Վերացել է ԿԱՊԿՈՒ սովորողների նկատմամբ կարծրատիպային վերաբերմունքը
2. Վերացել է խտրականությունը ԿԱՊԿՈՒ սովորողների նկատմամբ
3. Ուսումնական հաստատությունը սատարել է բոլորին՝ ինչպես հատուկ կար՝ իրենք ունեցողների, այնպես էլ

Դպրոցում տիրում է հանդուրժողականության մեծ մթնոլորտ:

Բոլորս տարբեր ենք, բոլորս հավասար...

Սսել է, թե բոլորս ծնունդով մարդ ենք՝ անկախ մեր ընդունակություններից և առանձնահատկություններից... չունեցողներին, իրենց՝ հասարակության լիիրավ անդամ լինելու գործում:

Աղյուսակ 29.

Տվյալներ հաստատությունում ներառական կրթության իրականացման և հավասարության ապահովման խնդիրների վերաբերյալ

Ցուցանիշ	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի
Ռեսուրս-սենյակ այցելող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների թիվը (ԿԱՊԿՈՒ) և սոկոսը	18 սովորող 100%	16 սովորող 100%	8 սովորող 100%
Ռեսուրս-սենյակ այցելող ԿԱՊԿՈՒ ունեցող սովորողների ծնողների (խնամակալների) թիվը և սոկոսը	100%	100%	100%
Հաստատության այն սովորողների թիվը և սոկոսը, ովքեր ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք	<p>23.05.2020թ. դրությամբ 18 սովորող Չայնի և խոսքի, ինտ./մտ./ ֆունկ ծանր խանգ.-1-6%</p> <p>Չայնի և խոսքի ֆունկ. Թեթև խանգ.- 5-27%</p> <p>Շարժող. Ֆունկ. Միջին խանգ.-1-6%</p> <p>Լսողութ. Ֆունկ. Միջին խանգ.-1-6%</p> <p>Ինտ/մտ./ ֆունկ. Թեթև խանգ.-6-33%</p> <p>Ինտ/մտ./ ֆունկ. Միջին խանգ. -4-22%</p>	<p>19.06.2021թ. դրությամբ 16 սովորող Չայնի և խոսքի, ինտ./մտ./ ֆունկ ծանր խանգ.-1-6%</p> <p>Չայնի և խոսքի ֆունկց.թեթև խանգ.- 3 աշ.-19%</p> <p>Լսողութ. Ֆունկ միջին խանգ., ինթ (մտ.)ֆունկ. միջ.1-6%</p> <p>Շարժող. Ֆունկ. Միջին խանգ.-1-6%</p> <p>Ինտ/մտ./ Միջին խանգ ֆունկ 3-19%</p> <p>Ինտ/մտ./ ֆունկ. Թեթև խանգ. 7-44%</p>	<p>03.06.2022թ. դրությամբ 8 սովորող Չայնի և խոսքի, ինտ./մտ./ ֆունկ ծանր խանգ.-1-12,5%</p> <p>Չայնի և խոսքի ֆունկց.թեթև խանգ.-2 աշ.-25%</p> <p>Շարժող. Ֆունկ. Միջին խանգ.-1-12,5%</p> <p>Ինտ/մտ./ Միջին խանգ ֆունկ 3-37,5%</p> <p>Ինտ/մտ./ ֆունկ. Թեթև խանգ. 1-12,5%</p>
Հաստատությունից դուրս եկած (ուսումն անավարտ թողած) ԿԱՊԿՈՒ ունեցող սովորողների թիվը	-	-	2 աշ.
ԿԱՊԿՈՒ ունեցող սովորողների բացակայությունների միջին թիվը (ժամ/սովորող)	<p>02.09.2019թ. դրությամբ 27 սովորող 509ժամ/27 սովորող</p> <p>01.01.2020թ. դրությամբ 20 սովորող 899ժամ/20 սովորող</p>	<p>14.09.2020թ. դրությամբ 17 սովորող 94 ժամ/17 սովորող</p> <p>01.01.2021թ. դրությամբ 19 սովորող 212ժամ/19 սովորող</p>	<p>03.06.2022թ. դրությամբ 8 սովորող 242 ժամ/8 սովորող</p>
Արտադասարանական աշխատանքների խմբակներում ներառվող և աշխատանքներին մասնակցող ԿԱՊԿՈՒ սովորողների թիվը և սոկոսը	--	--	--

Դպրոցի աշակերտական խորհրդում ԿԱՊԿՈՒ ունեցող սովորողների թիվը	2 աշակերտ	4 աշակերտ	3 աշակերտ
ԿԱՊԿՈՒ կարիք ունեցող սովորողների նկատմամբ հանդուրժողականության ձևավորմանն ուղղված աշակերտական նախաձեռնությունների թիվը:	-	-	-
Հաստատության վեբ կայքում և/կամ աշակերտական թերթում ԿԱՊԿ ունեցող անձաց կամ հաշմանդամության թեմայով սովորողների կողմից պատրաստված նյութերի, հոդվածների, ֆոտոնկարների, և այլ հրապարակումների թիվը:	-	-	-
Սեռերի հավասարության գործակիցը՝ հաստատությունում սովորող տղաների թվի հարաբերությունը աղջիկների թվին	23.05.2020թ. դրությամբ 487 սովորող 231 աղջիկ/ 256 տղա 1:1	19.06.2021թ. դրությամբ 451 սովորող 216 աղջիկ/235տղա 1:1	03.06.2022թ. դրությամբ 448 սովորող 214 աղջիկ/234 տղա 1:1
Աշակերտական խորհրդում սեռերի հավասարության գործակիցը՝ խորհրդի անդամ աղջիկների թվի հարաբերությունը տղաների թվին	31 աղջիկ/ 27 տղա 1:1	28աղջիկ/22տղա 1:1	30 աղջիկ/20 տղա 1:1
Գերազանց առաջադիմությամբ տղաների թվի հարաբերությունը գերազանց առաջադիմությամբ աղջիկների թվին	51 տղա/ 70 աղջիկ 1:1	47տղա/ 91 աղջիկ 1:1	47տղա/ 80 աղջիկ 1:1
Տարեկան անբավարար գնահատական(ներ) ունեցող տղաների թվի հարաբերությունը տարեկան անբավարար գնահատական(ներ) ունեցող աղջիկների թվին		-	-
Տղաների տարեկան միջին բացակայությունների թվի հարաբերությունը աղջիկների տարեկան միջին բացակայությունների թվին (ժամերով)	9315 տղա/ 8076 աղջիկ 1:1	3219 տղա/ 2160 աղջիկ 1,5:1	6844 տղա/ 4793 աղջիկ 1,5:1

«Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «քիմիա» և «կենսաբանություն» առարկաներից տղաների և աղջիկների միջին առաջադիմությունը/տարեկան գնահատականները	100%	100%	100%
Հաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը և տոկոսը	-	-	-
Աշակերտական խորհրդի անդամ ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը	-	-	-
Հաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների միջին տարեկան առաջադիմությունը/ գնահատականները	-	-	-

<p>Անվճար դասագրքեր ստացող սովորողների թիվը և տոկոսը</p>	<p>02.09.2019թ. դրությամբ 41/234=17% 7աշ.(100% գեղյ)- 17% 32աշ.(50% գեղյ)- 78% 2աշ.(30% գեղյ)- 5% 01.01.2020 թ. դրությամբ 41/229=18% 7աշ.(100% գեղյ)- 17% 32աշ.(50% գեղյ)- 78% 2աշ.(30% գեղյ)- 5%</p>	<p>14.09.2020թ. դրությամբ 45/244 5աշակերտ (100% գեղյ)-11% 1 աշակերտ (60% գեղյ)-2% 39 աշակերտ (50% գեղյ)-87% 01.01.2021թ. դրությամբ 45/231 5 աշակերտ (100% գեղյ)-11% 1 աշակերտ (60% գեղյ)-2% 39 աշակերտ (50% գեղյ)-87%</p>	<p>01.09.2021թ. դրությամբ 40/246 7 աշակերտ (100% գեղյ)-18% 1 աշակերտ (66% գեղյ)-2% 32 աշակերտ (50% գեղյ)-80% 01.01.2022թ. դրությամբ 40/239 7 աշակերտ (100% գեղյ)-18% 1 աշակերտ (66% գեղյ)-2% 32 աշակերտ (50% գեղյ)-80%</p>
<p>Անվճար սնունդ ստացող սովորողների թիվը և տոկոսը</p>	<p>02.09.2019թ. դրությամբ 258/492 = 52% 1:1 01.01.2020թ. դրությամբ 261/490 = 53% 1:1</p>	<p>14.09.2020թ. դրությամբ 256/500 = 51% 1:1 01.01.2021թ. դրությամբ 245/492= 50% 1:1</p>	<p>01.01.2022թ. դրությամբ 214/453 = 47% 1:1</p>
<p>Հաստատության կողմից իրականացված ներառական կրթությանն առնչվող արտադասարանական միջոցառումների թիվը՝ ըստ դասարանների (գրույցներ, ֆիլմերի դիտում, քննարկումներ, կլոր-սեղաններ, սեմինարներ, էքսկուրսիաներն այլն):</p>	<p>Տարեկան-83 (գրույցներ՝ 5-9-րդ դաս. 2անգ., մուլտիտում՝ 1-4-րդ դաս. 3 անգամ. Արտադաս. միջ.՝ 1-9-րդ դաս. 2 անգամ)</p>	<p>Տարեկան-10 4 անգամ-սնունդ 4 անգամ-գրենական պիտույք 2 անգամ-հագուստ</p>	<p>Տարեկան-8 2 անգամ-սնունդ 2 անգամ- գրենական պիտույք 4 անգամ-հագուստ</p>
<p>Սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների համար հաստատության իրականացրած սոցիալական աջակցության ծրագրերի թիվը</p>	<p>Տարեկան-10 /3 անգամ- սնունդ/ 4 անգամ-գրենական պիտույք/3 անգամ- հագուստ</p>	<p>Տարեկան-85 Զրույցներ՝ 5-9-րդ դաս. – 2 անգամ Մուլտիտում՝ 1-4-րդ դաս. 3 անգամ Արտադասարանական միջոցառումներ 1-9-րդ դասարան – 4 անգամ:</p>	<p>Տարեկան-39 Զրույցներ՝ 5-9-րդ դաս. – 2 անգամ Մուլտիտում՝ 1-4-րդ դաս. 2 անգամ Արտադասարանական միջոցառումներ 1-9-րդ դասարան – 1 անգամ:</p>

Ներառական կրթությունը գործընթաց է, որը հենվում է բոլոր երեխաների՝ այդ թվում նաև կրթության հատուկ պայմանների կարիք ունեցողների, կրթության ստանալու իրավունքի վրա: **Բոլոր երեխաներին կրթելը հանրակրթական համակարգի պարտականությունն է**

Մաս 5.

Համայնքային մասնակցություն

«Ծնողները, ընտանիքները, մանկավարժները և համայնքները միասնաբար» – սա է այն լավագույն համագործակցությունը, որը կարող է ապահովել, որ բոլոր աշակերտները ստանան անհրաժեշտ աջակցություն և ապահովված լինեն պահանջվող ռեսուրսներով՝ իրենց ուսման և կյանքի մեջ հաջողությունների հասնելու նպատակով:

Միջազգայնորեն տարանջատում են ծնողների, ընտանիքների, և համայնքների մասնակցության 6 ձև: Դրանք են՝

- ծնողական և ընտանեկան խնամքը, ուշադրությունը և հոգածությունը երեխայի հանդեպ.
- ծնողների, ընտանիքների և համայնքների մշտական հաղորդակցությունը (կապը) հաստատության հետ.
- ծնողների, ընտանիքների և համայնքների կամավորական բնույթի գործունեությունը՝ ուղղված հաստատությանն օժանդակելուն.
- աջակցությունը երեխային իր տնային աշխատանքների կատարման մեջ և սովորելու գործընթացում.
- ծնողների, ընտանիքների, և համայնքների ներգրավվածությունը ուսումնական հաստատության կողմից որոշումների կայացման գործընթացում.
- հաստատության համագործակցությունը տեղական իշխանությունների և համայնքների հետ:»

Ծնողների, ընտանիքների և համայնքի մասնակցությունը համարվում է ուսումնական հաստատության գործունեության բարելավման կարևոր միջոց: Մասնակցության առաջնային և կարևորագույն ձևն է երեխայի հանդեպ խնամքը, ուշադրությունը և հոգածությունը ծնողների և ընտանիքի կողմից, ներառյալ՝ ուսումնական հաստատություն երեխայի կանոնավոր հաճախումն ապահովելը: Անհրաժեշտ է նաև ծնողների և ընտանիքների մշտական հաղորդակցությունը և կապը ուսումնական հաստատության հետ, ծնողական ժողովներին կանոնավոր մասնակցությունը՝ երեխայի բացակայությունների, առաջադիմության, հաջողությունների և խնդիրների վերաբերյալ տեղեկացված լինելու և նրան աջակցելու համար: Ծնողական և ընտանեկան մասնակցության տեսանկյունից շատ կարևոր է նաև երեխայի տնային հանձնարարությունների կատարումը վերահսկելը և անհրաժեշտության դեպքում նրան աջակցելը՝ նպաստելով երեխայի մոտ սովորելու նկատմամբ սիրո և հակումների առաջացմանը: Ծնողներն իրավունք ունեն հետևել երեխայի ուսումնառությանը ուսումնական հաստատությունում, մասնակցել դասալսումներին, սակայն մեր երկրում նրանց մասնակցության այս ձևը տարածված չէ և ծնողների մասնակցության աստիճանը երեխայի ուսումնառության գործընթացին հաստատությունում հիմնականում ցածր է:

